Հավելված N 2
ՀՀ վարչապետի N 1095 - Լ
որոշման

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մշտադիտարկման իրականացման ընթացքում սույն ընթացակարգով նախատեսված դրույթների պահպանման համար պատասխանատու է մշտադիտարկումն իրականացնող ստորաբաժանման ղեկավարը, ինչպես նաև իրենց վերապահված իրավասությունների մասով, մշտադիտարկումն իրականացնող պաշտոնատար անձինք:

2. Մշտադիտարկման իրականացմանը տարբեր ստորաբաժանումների աշխատակիցների ներգրավված լինելու պարագայում մշտադիտարկումն իրականացնող ստորաբաժանում է համարվում այն ստորաբաժանումը, որին դրա իրականացումը մակագրված է:

3. Մշտադիտարկումը կարող է իրականացվել (կատարումը հանձնարարված լինել) մեկ և ավելի անձանց կողմից, որի պարագայում մշտադիտարկումն իրականացնող պաշտոնատար անձ են հանդիսանում բոլորը:

2. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

4. Մշտադիտարկումն իրականացվում է ծառայությանը հասանելի կամ ծառայությունում «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով ստացված տեղեկությունների հիման վրա ուսումնասիրություն (այդ թվում՝ հանդիպակաց) սկսելու հիմքերի առկայությունը կամ բացակայությունը ստուգելու նպատակով:

5. Մշտադիտարկումն իրականացվում է ծառայության ղեկավարի հրամանի հիման վրա՝ առանձին հարցերի պարզաբանման համար:

6. Հրամանի ընդունման համար հիմք կարող են հանդիսանալ վարչապետի հանձնարարականը, հանրագրերը, դիմումները և օրենքով սահմանված կարգով ստացված տեղեկատվությունը:

7. Մշտադիտարկումը կոնկրետ անձի կողմից կամ ժամկետներում իրականացվելու անհրաժեշտության դեպքում՝ հրամանում կարող է նշում կատարվել դրանց մասին:

8. Մշտադիտարկումն իրականացվում է ծառայությունում, անհրաժեշտության դեպքում, երևույթների, իրադարձությունների, իրողությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման և գնահատման նպատակով մշտադիտարկման շրջանակներում կարող են կատարվել այցելություններ:

9. Մշտադիտարկում իրականացնող պաշտոնատար անձը հանդես է գալիս ծառայության անունից և գործում է օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավասությունների շրջանակում:

10. Անհրաժեշտության դեպքում վերահսկվող օբյեկտներից, դրանց պաշտոնատար անձանցից մշտադիտարկմանն առնչվող տեղեկությունները, փաստաթղթերը, տեղեկանքներն ու պարզաբանումները պահանջվում են գրավոր: Պարտադիր կերպով նշվում են այն տեղեկությունները, փաստաթղթերը, տեղեկանքներն ու պարզաբանումները, որոնք վերահսկվող օբյեկտը կամ դրանց պաշտոնատար անձինք պետք է ներկայացնեն մշտադիտարկում իրականացնող պաշտոնատար անձին, ինչպես նաև դրանք ներկայացնելու ժամկետները:

11. Այցելությունների շրջանակում օրենքով սահմանված գործողություններ իրականացնելիս կազմվում է արձանագրություն՝ համաձայն N 4 ձևի՝ առկայության դեպքում կցելով ստացված նյութերը:

12. Այցելությանը մասնակից դարձվող այլ անձինք գրավոր ծանուցվում են ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ գործողությունը կատարելու համար, որը ենթակա է արձանագրման:

13. Վերահսկվող օբյեկտի աշխատակիցների և պաշտոնատար անձանց կողմից մշտադիտարկում իրականացնող պաշտոնատար անձի օրինական պահանջները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ Ծառայության լիազորությունների իրականացմանն այլ կերպ խոչընդոտելու դեպքում խմբի անդամը, հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 182.10-րդ հոդվածը, 254-րդ և 255-րդ հոդվածներով նախատեսված՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու ընդհանուր կանոնները, ինչպես նաև արձանագրության բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջները, կազմում է համապատասխան արձանագրություն, միաժամանակ արձանագրություն կազմելիս խախտում կատարած անձին բացատրում է նույն օրենսգրքով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, որի մասին արձանագրության մեջ կատարում է նշում:

14. Մշտադիտարկման ընթացքում նոր հանգամանքներ և անհրաժեշտություն առաջանալու դեպքում ծառայության ղեկավարը, համաձայնեցնելով վարչապետի հետ, կարող է տալ մշտադիտարկումն ավարտելու և ուսումնասիրություն իրականացնելու հանձնարարություն:

3. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

15. Մշտադիտարկման ավարտից հետո արդյունքներն ամփոփվում են համապատասխան տեղեկանքով (մշտադիտարկման արդյունքներն ամփոփող փաստաթուղթ) և խախտումներ, խնդիրներ հայտնաբերելու պարագայում ներկայացվում են վարչապետին՝ համապատասխան հանձնարարականներ տալու համար, որը կարող է հիմք հանդիսանալ վարչապետի հանձնարարությամբ կամ համաձայնությամբ ուսումնասիրություն իրականացնելու համար:

16. Առերևույթ հանցագործության հատկանիշների առկայության դեպքում այդ մասին Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ծառայության կամ պաշտոնատար անձի անունից իրավապահ մարմիններին ներկայացվում է համապատասխան հաղորդում:

17. Տեղեկանքը ստորագրվում է մշտադիտարկումն իրականացրած պաշտոնատար անձի, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի և համակարգողի կողմից (վերջիններիս արձակուրդի, գործուղման կամ անաշխատունակության մեջ գտնվելու, ինչպես նաև այլ հիմքով բացակայելու դեպքում տեղեկանքը ստորագրվում է միայն մյուսների կողմից, որի մասին տեղեկանքում նշում է արվում):

18. Տեղեկանքը պետք է բաղկացած լինի «բովանդակություն», «ներածություն», «եզրակացություն» բաժիններից:

19. Մշտադիտարկման արդյունքներն ամփոփող տեղեկանքը պետք է պարունակի՝

1) մշտադիտարկում իրականացնելու մասին հրամանի ամսաթիվն ու համարը.

2) մշտադիտարկմամբ պարզաբանման ենթակա հարցը.

3) մշտադիտարկումն իրականացրած պաշտոնատար անձանց տվյալները.

4) մշտադիտարկմամբ բացահայտված խախտումները կամ դրանց բացակայությունը, խախտումների առկայության պարագայում դրանց մանրամասն նկարագրությունը և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել.

5) տեղեկանքը ստորագրող պաշտոնատար անձի տվյալները (պաշտոնի անվանումը, անունը և ազգանունը):

20. Մշտադիտարկման տեղեկանքը կարող է պարունակել սույն ընթացակարգի 19-րդ կետում նշված տեղեկատվությունից բացի այլ տվյալներ:

21. Մշտադիտարկման արդյունքներից բխող՝ վարչապետին ուղղված առաջարկությունները ներկայացվում են առանձին գրությամբ: Պահանջվող միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ առանձին գրությամբ կարող են ներկայացվել վերահսկվող օբյեկտին և այլ շահագրգիռ պետական մարմիններին կամ պաշտոնատար անձանց՝ նշելով առաջարկության հիմքերը և հիմնավորումները:

Ձև N 1

Շահերի բախման վերաբերյալ հայտարարագիր

Ես՝ _____u, հայտարարում եմ, որ
(անունը, ազգանունը)

_____ ում _____ի
(վերահսկվող օբյեկտի անվանումը) (ուսումնասիրության ենթակա ոլորտի կամ դրա համապատասխան մասի անվանումը)

ուսումնասիրության շրջանակներում չունեմ շահերի բախում: Առկա չէ որևէ հանգամանք, որը կարող է առաջացնել «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածով սահմանված դեպքերով շահերի բախման իրավիճակ:

Պաշտոն

Անունը, Ազգանունը՝

« » _____ 20___ թ.

Ձև N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Հ Ա Ն Ձ Ն Ա Ր Ա Ր Ա Գ Ի Ր № ___

___ _____ 20__ թվականի

……..

Ղեկավարվելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի `

Սահմանել՝

1. **Վերահսկվող օբյեկտի լրիվ անվանումը, ՀՎՀՀ՝**

_____,

2. **Գտնվելու վայրը՝**

_____, _____, Հայաստան.

3. **Ուսումնասիրության ենթակա ոլորտը կամ դրա համապատասխան մասը՝**

(օրինակ՝ ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ օրինականության և արդյունավետության վերահսկողություն, գնումների գործընթացի նկատմամբ օրինականության և արդյունավետության վերահսկողություն, եկամուտների հաշվեգրման նկատմամբ օրինականության և արդյունավետության վերահսկողություն և այլն)**:**

4. **Ուսումնասիրության ենթակա ժամանակահատվածը՝**

_____

5. **Ուսումնասիրություն կատարելու ժամկետը և վայրը՝**

_____

_____

6. **Ուսումնասիրություն կատարող պաշտոնատար անձանց տվյալները՝**

1) Անունը, ազգանունը, պաշտոնը (խմբի ղեկավար)_____
2) Անունը, ազգանունը, պաշտոնը (խմբի ղեկավարին փոխարինող)_____
3) _____

4) _____

ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

Ձև N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Հ Ա Ն Ձ Ն Ա Ր Ա Ր Ա Գ Ի Ր № ___

___ _____ 20___ թվականի

……

Ղեկավարվելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի _____՝ հանձնարարում եմ իրականացնել հանդիպակաց ուսումնասիրություն ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի_____ հանձնարարագրով սահմանված վերահսկվող օբյեկտի՝ _____ գործարքի կողմի մոտ:
(վերահսկվող օբյեկտի անվանումը)

Սահմանել՝

1. **Գործարքի կողմ հանդիսացող անձանց անվանումը, ՀՎՀՀ-ն՝**

   _____

   _____

2. **Ուսումնասիրության ենթակա ոլորտը կամ դրա համապատասխան մասը՝**

   _____

   _____

3. **Ուսումնասիրության ենթակա ժամանակահատվածը՝**

   _____

4. **Ուսումնասիրություն կատարելու ժամկետը՝**

   _____

5. **Ուսումնասիրություն կատարող պաշտոնատար անձանց տվյալները՝**

   1. Անունը, ազգանունը, պաշտոնը (խմբի ղեկավար)_____

   2.Անունը, ազգանունը, պաշտոնը (խմբի ղեկավարին փոխարինող)_____

3._____

4._____

ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

Ձև N 4

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ / [1]

« » _____ 20___ թ.

Ղեկավարվելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 7-րդ հոդվածի ———— կետով՝

Ես՝ Պետական վերահսկողական ծառայության _____
(ստորաբաժանման անվանումը)

_____ _____
(զբաղեցրած պաշտոնը) (անունը, ազգանունը)

_____ հետ միասին
(համագործակցող աշխատակցի զբաղեցրած պաշտոնը, անունը, ազգանունը)

_____կատարեցինք
(վերահսկվող օբյեկտի գտնվելու վայրը)

_____

_____,

որի արդյունքում կազմեցինք սույն արձանագրությունը՝

_____

_____

_____

_____:

_____
(կից ներկայացվող փաստաթղթերը (լուսանկարում, տեսագրում, փաստաթղթերի պատճենահանում)

_____
(արձանագրությունը, անձանց ստորագրությունները)

[1] Լրացնել հանձնարարագրի համարը, որից հետո տալ հերթական համար:

Ձև N 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«__» _____ 20__թ. 0077, Երևան, Մաշտոցի պող.47

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ _____Ի ԹԻՎ --- ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱԶՄՎԱԾ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

(Ուսումնասիրության հարցի վերնագիր)

Խմբի ղեկավար՝ պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը

Խմբի անդամ (անդամներ)՝ պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

27.11.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ